

ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ «ԼՈՒՅՍ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ ԲԱՐՁՐԱՁԱՅՆՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՆԳ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ



Վերջին տարիներին «Լույս» հիմնադրամի հրապարակումներում մատնանշվել են ՀՀ տնտեսության մեջ առկա մի շարք խնդիրներ, որոնցից հինգը իրենց առաջացրած հետևանքների հետ ներկայացվում են ստորև:

ԽՆԴԻՐ 1. Պետական բյուջեի կապիտալ ծախսերի թերակատարումը

Արդեն երեք տարի շարունակ, կառավարության կողմից թերակատարվում են պետական բյուջեի կապիտալ ծախսերը: Այսպես, 2018, 2019 և 2020 թվականներին ՀՀ պետական բյուջեի կապիտալ ծախսերի (ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր) կատարողականը ճշտված պլանի նկատմամբ կազմել է համապատասխանաբար 74.0%, 73.5% և 76.7%¹:

Մեր կողմից 2019թ. իրականացված վերլուծության² արդյունքները ցույց են տալիս, որ կապիտալ ծախսերի թերակատարումն ունենում է երկարաժամկետ ազդեցություն ՀՆԱ-ի վրա, և եթե անգամ հաջորդ տարի կապիտալ ծախսերը իրականացվեն պլանավորվածին համապատասխան, թերակատարման (կամ կապիտալ ծախսերի նվազեցման) բացասական հետևանքները հնարավոր չի լինի ամբողջությամբ չեզոքացնել: Հետևաբար, կապիտալ ծախսերի վերոհիշյալ թերակատարումները զգալիորեն կնվազեցնեն տնտեսական աճի պոտենցիալը ապագա տարիներին:

Հետևանքները

2020թ. տնտեսական ներուժի արդեն իսկ խաթարված արդյունքը, ինչպես նաև տեղի ունեցած ցնցումների հետևանքները խոր ազդեցություն են ունեցել ՀՀ տնտեսության վրա՝ առաջացնելով 7.5 տոկոս տնտեսական ակտիվության անկում:

¹ Կատարողականը հաշվարկվել է 2020թ. սեպտեմբերի վերջի դրությամբ ճշտված պլանի նկատմամբ:

² «ՀՀ պետական բյուջեի կապիտալ ծախսերի թերակատարումը և դրա հնարավոր հետևանքները», 2019, «Լույս» հիմնադրամ: Էլ. տարբերակը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.luys.am/index.php?m=publicationsOne&pid=102> (այցելվել է 21.12.2020թ.):

Ավելին, ըստ ԱՄՀ կանխատեսումների (2020թ. դեկտեմբերի 16-ի հրապարակմամբ)՝ 2021թ. տնտեսական աճը կլինի բավական ցածր՝ 1.0%, ինչը նշանակում է, որ տնտեսական վերականգնում չի սպասվում նաև 2021 թվականին:

ԽՆԴԻՐ 2. Կառավարության պարտքի աճը

2018 և 2019 թվականներին, ունենալով կապիտալ ծախսերի թերակատարման, ինչպես նաև հարկային եկամուտների գերակատարման (հատկապես 2019թ.) ցուցանիշներ, կառավարությունը շարունակաբար մեծացրել է պարտքի ծավալը: Այսպես, 2018թ. վերջի դրությամբ ԱՄՆ դոլարով արտահայտված կառավարության պարտքն աճել է 3.2%-ով, իսկ 2019թ. վերջի դրությամբ՝ 7.2%-ով: Սակայն, միաժամանակ, ՀՆԱ-ի առաջանցիկ աճի տեմպերի շնորհիվ նույն տարիներին տեղի է ունեցել կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցության նվազում: Մեր կողմից մշտապես նշվել է, որ անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել պետական բյուջեի թերակատարումների պայմաններում պարտքի ծավալի աճ թույլ չտալու համար, ինչի դեպքում կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցության նվազումը կլիներ ավելի արագ:

2020 թվականին, բազմաթիվ ցնցումների պայմաններում, մի կողմից՝ նվազել է ՀՆԱ-ն, մյուս կողմից՝ կառավարությունը մեծացրել է պարտքի ծավալը, ինչի արդյունքում կտրուկ աճել է կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը, որը 2020թ. վերջի դրությամբ կգերազանցի ՀՆԱ-ի 60%-ը:

Հատկանշական է, որ ներգրավված պարտքը հիմնականում օգտագործվել է ոչ թե կապիտալ, այլ ընթացիկ ծախսերի համար և չի նպաստել տնտեսական ներուժի բարձրացմանը՝ այդպիսով ավելի մեծացնելով պարտքի կայունության ռիսկերը:

Հարկ է նշել, որ ճգնաժամային իրավիճակում արդարացված է պարտքի աճը, քանի որ դրա միջոցով հնարավոր է խթանել տնտեսական ակտիվությունը և խուսափել խոր անկումից: Սակայն, միևնույն ժամանակ բավական կարևոր են պարտքի օգտագործման ուղղությունները: Եթե ներգրավվող միջոցներն օգտագործվեն ընթացիկ՝ տնտեսական աճ չգեներացնող ծախսերի ֆինանսավորման համար, ապա երկարաժամկետում պետական պարտքի աճը կհանգեցնի մակրոտնտեսական անկայունության: Հետևաբար, մեր կողմից բազմիցս առաջարկվել է կառավարությանը՝ հնարավորինս զգուշություն դրսևորել այս հարցում, հետագա տարիների տնտեսական աճը չվտանգելու համար:

Հետևանքները

2020թ. դեկտեմբերի վերջի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 7968.5 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ աճելով 8.8%-ով: Սակայն, միաժամանակ, փոխարժեքի արժեզրկման հետևանքով, դրամով արտահայտված պետական պարտքն աճել է 18.6%-ով՝ հասնելով 4,164.3 մլրդ դրամի: Կառավարության պարտքը նույնպես զգալիորեն աճել է՝ դոլարային արտահայտությամբ 9.9%-ով, իսկ դրամային արտահայտությամբ՝ 19.7%-ով: ԱՄՀ-ի կողմից 2020թ. համար կանխատեսված 6,140.0 մլրդ դրամ ՀՆԱ-ի ցուցանիշը հիմք ընդունելու պարագայում, պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը 2020թ. վերջի դրությամբ կկազմի 67.8% (աճը 2019թ. նկատմամբ՝ 14.3 տոկոսային կետ), իսկ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը՝ 63.9% (աճը 2019թ. նկատմամբ՝ 14.0 տոկոսային կետ):

Հարկ է նշել, որ 2021թ. հենց սկզբին իրականացվել է եվրապարտատոմսերի նոր խմբաքանակի տեղաբաշխում՝ 750 մլն ԱՄՆ դոլար ծավալով՝ առանց նախկինում թողարկվածների հետգնման: Եթե դա ևս ավելացնենք առկա պետական պարտքի պաշարին, ապա այն կկազմի ավելի քան 8.7 մլրդ ԱՄՆ դոլար, կամ 4,556.2 մլրդ ՀՀ դրամ: Վերջինս ԱՄՀ կողմից կանխատեսված ՀՆԱ-ի նկատմամբ կազմում է 74.2%: Եթե նույնիսկ ենթադրենք, որ 2021թ. ընթացքում պարտքի պաշարի ավելացումը միայն այդ 750 մլն ԱՄՆ դոլարի չափով է լինելու, ապա 2021թ. անվանական ՀՆԱ-ի նկատմամբ, որը ԱՄՀ-ի կողմից կանխատեսվել է 6,344 մլրդ դրամի չափ, պարտքը կկազմի 71.2%: Այսինքն՝ ՀՀ պետական պարտքը արդեն իսկ գերազանցել է միջազգային գրեթե բոլոր վերլուծություններում զարգացող երկրների համար ռիսկային համարվող 60%-ի շեմը: Ընդ որում, ՀՀ օրենսդրությամբ ՀՆԱ-ի 60%-ը համարվում է կառավարության պարտքի սահմանային շեմ: Սա, իհարկե, կունենա մի շարք բացասական հետևանքներ: Այդ թվում՝ տեղի կունենա ներդրողների կողմից ՀՀ տնտեսության նկատմամբ վստահության անկում, խիստ կնվազի հարկաբյուջետային քաղաքականության հնարավորությունները տնտեսական իրավիճակին արձագանքելու տեսանկյունից, իսկ պետական ծախսերի կառուցվածքում կաճեն տոկոսավճարները՝ նվազեցնելով սոցիալական, կրթական, առողջապահական և այլ կարևոր ծրագրերի համար անհրաժեշտ ռեսուրսները:

ԽՆԴԻՐ 3. Սպառողական և հիպոթեքային վարկերի ծավալների բարձր աճը

2018-2019 թվականներին բավական բարձր տեմպերով աճել են տնային տնտեսությունների վարկերի ծավալները: Այսպես, 2018թ. տարեվերջի դրությամբ սպառողական վարկերն աճել են 37.1%-ով, իսկ հիպոթեքային վարկերը՝ 22.1%-ով: Մինչդեռ նույն ժամանակահատվածում միջին ամսական աշխատավարձը աճել է

4.0%-ով, իսկ բնակչության եկամուտներն ապահովող մյուս բաղադրիչներից տրանսֆերտները նվազել են 2.8%-ով: Նմանօրինակ իրավիճակ էր նաև 2019 թվականին. սպառողական և հիպոթեքային վարկերն աճել էին համապատասխանաբար 30.6%-ով և 40.6%-ով, իսկ աշխատավարձը և տրանսֆերտները՝ 5.8%-ով և 2.6%-ով: Դա նշանակում է, որ բնակչության դրամական եկամուտների համեմատ վարկային պարտավորություններն աճել են անհամեմատ արագ տեմպերով՝ վտանգի տակ դնելով հետագայում դրանց մարելու հնարավորությունները: Սակայն, ինչպես կառավարության, այնպես էլ ՀՀ կենտրոնական բանկի կողմից ոչ մի միջոցառում չի ձեռնարկվել վարկերի աճի տեմպը նվազեցնելու կամ բնակչության եկամուտների աճն արագացնելու ուղղությամբ:

Հետևանքները

Բավական մեծ վարկային բեռի առկայության պայմաններում, 2020թ. տնտեսական ցնցումները մեծ հարված հասցրին բնակչության վարկային պարտավորությունների կատարման հնարավորություններին: Արդյունքում, 2020թ. դեկտեմբերին չաշխատող վարկերի կշիռը ընդհանուր վարկերի նկատմամբ կազմեց 6.0%՝ նախորդ տարվա համեմատ աճելով 1.6 տոկոսային կետով: Ընդ որում, սպառողական վարկերի չաշխատող մասը 2020թ. դեկտեմբերին հասավ 13.1%-ի (նախորդ տարվա 6.3%-ի փոխարեն), իսկ հիպոթեքային վարկերինը՝ 2.8% (նախորդ տարվա 1.9%-ի փոխարեն):

ԽՆԴԻՐ 4. Ավտոմեքենաների ներմուծման կտրուկ աճը և այդ գործոնի սխալ օգտագործումը

2019թ. ընթացքում կտրուկ աճել է տրանսպորտային միջոցների ներմուծման ծավալները՝ կապված 2020 թվականից ներմուծման մաքսատուրքերի բարձրացման հետ (այս միտումը ավելի է սրվել 2019թ. վերջում): 2019-ին Հայաստան է ներմուծվել աննախադեպ քանակությամբ՝ մոտ 189.000 ավտոմեքենա: Դա նպաստել է ինչպես հարկային եկամուտների աճին, այնպես էլ տնտեսական աճի արագացմանը (ավտոմեքենաների վերանորոգման, ապահովագրության և այլ հարակից ծառայությունների աճի միջոցով): Այդ պատճառով Կառավարությունը ոչ մի քայլ չի ձեռնարկել դրանց ներհոսքը սահմանափակելու համար:

Սա առաջացրել է մի շարք խնդիրներ: Մասնավորապես, չափից ավելի շատ ներմուծված ավտոմեքենաները բեռ են դարձել հասարակության համար, քանի որ դրանց՝ ԵԱՏՄ շուկայում վաճառքի հնարավորությունները կտրուկ նվազել են 2020 թվականի սկզբից: Ավտոներկրողների մեծ մասը զգալի ծավալներով վարկեր է

վերցրել մեքենաների ներմուծման համար, իսկ դրանց պահանջարկի կտրուկ նվազումը հանգեցրել է գների անկման: Իրավիճակը մեծ խնդիր է առաջացրել բնակչության համար՝ վերցրած վարկերը փակելու հետ կապված, ձևավորելով լուրջ սոցիալական դժվարություններ:

Մյուս կողմից՝ ներմուծված ավտոմեքենաների մաքսազերծման գծով վճարված եկամուտները, կառավարությունը ներկայացրել է որպես հարկային եկամուտների աննախադեպ աճ՝ հաշվի չառնելով դրանց միանգամյա բնույթը: Դրանց հիման վրա նախատեսվել են պետական բյուջեի պերմանենտ ծախսերի (աշխատավարձերի, կենսաթոշակների և այլնի) աճեր, ինչը մեր կողմից բազմիցս նշվել է, որ խնդրահարույց է, քանի որ հանգեցնելու է հարկաբյուջետային կայունության վտանգմանը՝ միանգամյա եկամուտների դրական արդյունքի չեզոքացման պարագայում:

Հետևանքները

Ավտոմեքենաների ներմուծման համար բնակչությունը մեծ ծավալներով վարկեր է վերցրել, որոնց մարման անհնարինությունը նպաստել է չաշխատող վարկերի աճին:

Մյուս կողմից՝ միանգամյա հարկային եկամուտների հիման վրա պետական բյուջեում պերմանենտ ընթացիկ ծախսերի (աշխատավարձի, կենսաթոշակի, այլ սոցիալական ծախսերի) նախատեսման հետևանքով, կառավարությունը ներկայումս հարկադրված է պարտք ներգրավել՝ դրանց կատարումն ապահովելու համար:

ԽՆԴԻՐ 5. Կորոնավիրուսի ինչպես տնտեսական, այնպես էլ առողջապահական հետևանքների մեղմմանն ուղղված քաղաքականությունների ծախսողումը

Կորոնավիրուսի արագ տարածման հետևանքով տնտեսությունում առաջացել է խոր ճգնաժամային իրավիճակ: Մի կողմից՝ նվազել է տնտեսական ակտիվությունը՝ հանգեցնելով հարկային եկամուտների նվազմանը, մյուս կողմից աճել է պետական բյուջեի ծախսերը՝ ուղղված հակաճգնաժամային միջոցառումներին: Արդյունքում, դժվարին իրավիճակ է ստեղծվել պետական քաղաքականության համար:

Սակայն, ինչպես միշտ կառավարությունն ընտրել է սխալ ճանապարհը՝ իրականացնելով ընթացիկ ծախսերի աճ և կապիտալ ծախսերի թերակատարում: Բացի այդ, կառավարության կողմից հայտարարված կարանտինային սահմանափակումները 2020թ. մարտ-ապրիլ ամիսներին, չեն տվել անհրաժեշտ

արդյունքը հիվանդության տարածման կասեցման գործում, սակայն հանգեցրել են տնտեսական ակտիվության կտրուկ անկման:

Կառավարության կողմից հրապարակված հակաճգնաժամային միջոցառումները չեն իրականացվել սահմանված կարգով, ինչի արդյունքում տնտեսական աճին ամենամեծ նպաստում ունենալու հնարավորությամբ օժտված ծրագիրը (80 մլրդ դրամ նախատեսված ծավալով) չի իրականացվել: Հարկային ոլորտի միջոցառումները՝ մասնավորապես շահութահարկի գծով բարեփոխումները, թեև ունեցել են դրական ազդեցություն, եղել են ուշացած և ամբողջությամբ չեն ծառայել իրենց նպատակին:

Հարկաբյուջետային քաղաքականությունը զուրկ է եղել թափանցիկությունից և տրամաբանությունից: Կառավարության կողմից հայտարարվել է, որ ճգնաժամին հակազդելու նպատակով նախատեսվում է իրականացնել լրացուցիչ 150 մլրդ դրամի չափով ծախսեր: Սակայն, դրանք ամբողջությամբ չեն իրականացվել և փաստացի իրականացման մասին չի հրապարակվել պարբերական տեղեկատվություն: Բացի այդ, կառավարությունը չի իրականացրել սահմանված կապիտալ ծախսերը, ինչը լրացուցիչ զսպել է տնտեսական ակտիվությունը:

Հետևանքները

2020թ. ընթացքում տեղի ունեցած իրադարձությունների և դրանց համարժեք արձագանքի բացակայության հետևանքով առաջացել է խոր ճգնաժամ՝ ոչ միայն տնտեսության, այլև երկրի գրեթե բոլոր ոլորտներում: Ընդհանուր առմամբ տնտեսությունը գլորվում է անկման ուղղությամբ՝ առանց դրական ազդակների: Գրեթե բոլոր ճյուղերում առկա է անկման խորացում, սակայն չկա տնտեսական քաղաքականության որևէ արձագանք այս ամենին: COVID-19-ի հետևանքների չեզոքացման համար մշակված հակաճգնաժամային ծրագրերը գրեթե սպառվել են՝ այդպես էլ մնալով մասամբ չիրականացված (մասնավոր ներդրումների խթանմանն ուղղված ծրագիրը, որի համար նախատեսվել էր մոտ 80 մլրդ դրամի չափով գումար, չի իրականացվել): Այս պայմաններում, ճգնաժամի ակտիվ փուլը դեռևս կշարունակվի՝ հանգեցնելով հսկայական տնտեսական կորուստների:

Միաժամանակ, համաճարակային իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում բարելավման միտումներ չի ցուցաբերում, ինչի արդյունքում տնտեսությունում անորոշությունները պահպանվում են՝ հիմքեր ստեղծելով տնտեսական անկման խորացման համար:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան [ակտիվ հղման](#) տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: